ԱՆՆԱ ԱՍԱՏՐՅԱՆ
արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ,
ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն
Էլ. փոստ՝ instart@sci.am, annaasatryan2013@gmail.com
DOI: 10.56813/2953-786X-2023.3-23

ՀՀ ԳԱԱ ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ ԵՎ ՊԱՐՍԿԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Ներածություն

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտն իրականացրած իր աշխատանքների շնորհիվ՝ նպաստում է հարևան բարեկամ երկրի՝ Իրանի Իսլամական Հանրապետության ոլորտային գիտական կադրերի պատրաստման գործին: Ինստիտուտում 2008 թվականից իրենց հետբուհական կրթությունն են ստանում Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացիները: Նրանցից շատերը, սահմանված ժամկետներում ավարտելով ու պաշտպանելով իրենց թեկնածուական ատենախոսությունները, ստացել են արվեստագիտության և/կամ ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճան:

Բնականաբար, նրանց հետազոտությունները գլխավորապես նվիրված են պարսկական արվեստի ուսումնասիրության հարցերին:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտում գործում է Արվեստագիտության 016 մասնագիտական խորհուրդը, Հայաստանում միակը, որ գիտական աստիճաններ է շնորհում արվեստագիտության բոլոր բնագավառներում: 016 մասնագիտական խորհրդում Իրանի արվեստի ուսումնասիրությանը նվիրված իրենց թեկնածուական

ատենախոսություններն են պաշտպանել ինչպես ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի, այնպես էլ Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի, Երևանի պետական համալսարանի և Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի՝ Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի ասպիրատները:

Հոդվածի նպատակն է առաջին անգամ ներկայացնել պարսկական արվեստի ուսումնասիրության գործում ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ներդրումը: Առաջին անգամ կազմվել և գիտական շրջանառության մեջ է դրվել ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի Արվեստագիտության 016 մասնագիտական խորհրդում պաշտպանած և արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան ստացած իրանցի ասպիրանտների ցուցակը՝ համապատասխան տվյալներով:

Կերպարվեստ

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ասպիրանտ **Ֆարզադ Շիրնասաբզադեհի** «Միր Մալասի ժայռապատկերները» թեմայով թեկնածուական ատենախոսությունը (գիտական ղեկավար՝ Ֆելիքս Տեր-Մարտիրոսով)[1]՝ Միր Մալասի ժայռապատկերների առաջին գիտական ուսումնասիրությունն է, որտեղ առաջին անգամ ներկայացվել են ամբողջական տեղեկություններ Միր Մալասի պատկերների մասին, հայտնաբերվել և գիտական հանրությանն է ներկայացվել երկու նոր պատկեր:

Միր Մալասի ժայռապատկերները կապված են Իրանի հազարամյակների պատմության և առասպելների

[1] Հրապարակային պաշտպանությունը տեղի է ունեցել ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական աստիճանաշնորհման 016 մասնագիտական խորհրդի 2014 թ. հունվարի 23-ի նիստում:

հետ: Դրանց նշանները ցույց են տալիս մարդկանց կյանքի ընթացքը, բացահայտում հնագույն մարդկանց խորհրդավոր անցյալը: Դրանք պատուհաններ են դեպի հնագույն անցյալը, որոնցով կարող ենք ծանոթանալ մարդկանց գրելու, լեզվի ու արվեստի պատմությանը, կլիմայական պայմաններին, առասպելներին և, որ ամենակարևորն է, նրանց մտածելակերպին:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից, որոնք ներառում են փաստագրական աշխատանքների արդյունքում կազմած ժայռապատկերների՝ հատկապես Միր Մալասում կատարված լուսանկարները:

Առաջին գլխում՝ «Պատկերագրության արվեստը», ներկայացվել է տարածաշրջանի աշխարհագրական ու պատմական ժամանակաշրջանի նկարագրությունը, ժայռարվեստի տեսակների սահմանումները, հնագույն պատկերագրության արվեստը, ինչպես նաև ժայռարվեստի տեսությունները: Երկրորդ՝ «Միր Մալասի տարածաշրջանի առանձնահատկությունները», գլխում քննության են առնվել Միր Մալասի տարածաշրջանային առանձնահատկությունները, երկրագնդի բաժանումներն ըստ երկրաբանական ժամանակաշրջանների, Լուրեստանի սկզբնական համայնքները, հին ժամանակների Զագրոսը, Լուրեստանի աշխարհագրական և բնական առանձնահատկությունները, Միր Մալասի հարմարավետությունը նկաչության համար: Երրորդ գլուխը նվիրված է Միր Մալասի ժայռարվեստի վերլուծությանն ու մեկնաբանությանը: Ներկայացվել է պատկերների առարկան, ապա անդրադարձ արվել գույնին ու չափսերին: Մանրամասն ներկայացված են նաև պատկերների միջոցը,

գունավոր պատկերները, պրիմիտիվ արվեստային ոճ ունեցող պատկերները, անհայտ պատկերների գեղարվեստական տիպաբանությունն ու առասպելաբանական վերլուծությունը, նկարների կառուցվածքը, ժամանակագրությունը:

Իր ուսումնասիրության արդյունքում դիսերտանտը հանգում է մի շարք կարևոր եզրակացությունների, որ «Միր Մալասի նկարների հիմնական թեման վայրի կենդանիների որսն է՝ իրենց բազմազանությամբ և կառուցվածքով: Այդ նկարները և նշանները հնարավոր չէ հասկանալ առանց զուգահեռներ տանելու այլ նմանատիպ արվեստների հետ՝ օգտագործելով նկարագրությունները, տիպաբանությունը, դիցաբանությունը և ձևավորման, նմանատիպ կառուցվածքների ուսումնասիրությունը: Նկարի ոչ մի բաղադրիչ անիմաստ չէ և ամեն մի պատկեր խորհրդանշում է ինչ-որ անհատի, իմաստ կամ հատուկ դեպք: Նկարիչն ըստ իր մտքի թռիչքի՝ պատկերել է քարայծ, մարդ և այլն, ու մարդը՝ դիտելով արվեստագետի պատկերած կերպարները, հասկանում է պատկերում նկարված կերպարների հոգին, որոնք կարծես միմյանց լրացնող կերպարներ են և պատմում են պատերազմի կամ որսորդության մասին: Այս պատկերները մի տեսակ տեսողական խորհրդանիշեր են: Դրանք ցուցադրում են ժողովրդի որսորդության արկածները շատ պարզ ձևով և բոլորի համար հասկանալի լեզվով՝ առանց ժամանակի և լեզվի սահմանափակումների: Սա միջազգային, տեսողական և առանց բառերի լեզու է»:

Ատենախոսությունը շարադրելիս ատենախոսը հենվել է տարածաշրջանային ուսումնասիրությունների և տեղի բնակիչների հետ հարցազրույցների վրա: Բոլոր նկարները լուսանկարել է, համակարգչի օգնությամբ

վերարտադրել ու թվայնացրել, ապա՝ մանրակրկիտ ուսումնասիրել:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ասպիրանտ **Մանդանա Սեփասիի** «Կնոջ կերպարն Իրանի ժամանակակից նկարիչների ստեղծագործություններում» (ԺԷ.00.03 - «Կերպարվեստ, դեկորատիվ և կիրառական արվեստ, դիզայն») թեմայով թեկնածուական ատենախոսության մեջ (գիտական ղեկավար՝ Արարատ Աղասյան)[2]՝ առաջին անգամ բացահայտվել են կնոջը պատկերող նկարիչների ստեղծագործական տարբեր ոճերն ու նրանց կիրառած գեղարվեստական-արտահայտչական միջոցները: Պարզաբանվել է, թե ինչպես են տարբեր ոճերի նկարիչները պատկերացնում կանանց դերը հասարակության մեջ, բացահայտվել են նկարչի գեղագիտական և սոցիալական հայացքներն ու դրանց ազդեցությունը կնոջ կերպարը մեկնաբանելիս, վերլուծության են ենթարկվել գեղանկարներում օգտագործված պլաստիկական այն տարրերը, որոնք նպաստել են արվեստի ստեղծագործության կատարելագործմանը: Հետազոտվել է կնոջ կերպարն Իրանի ռեալիստ և Սաղախանեի նկարիչների ստեղծագործություններում, քննության է առնվել կնոջ կերպարն Իրանի մոդեռն նկարչության մեջ, ուսումնասիրվել է կնոջ կերպարն Իրանի նորագույն շրջանի մանրանկարչության մեջ և Իրանի Իսլամական հեղափոխության նկարիչների ստեղծագործություններում:

---

[2] Ատենախոսության հրապարակային պաշտպանությունը տեղի է ունեցել ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական աստիճանաշնորհման 016 Արվեստագիտության մասնագիտական խորհրդի 2015 թ. մարտի 26-ի նիստում:

Իրանցի կինը տարբեր ձևերով ու ոճերով է ներկայացվել ժամանակակից նկարիչների ստեղծագործություններում: Մ. Սեփասիի հետազոտության նպատակն է ուսումնասիրել այդ ոճերն ու նկարիչների հայացքները և պարզել, թե դրանք ինչպիսի նշանակություն են ունենում կնոջ պատկերման գործում:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից, որը ներառում է 51 ստեղծագործություններից կազմված պատկերագիրք:

Առաջին գլխում՝ «Կնոջ կերպարն Իրանի ռեալիստ և Սաղախանեի նկարիչների ստեղծագործություններում», ուսումնասիրվել է կնոջ կերպարը Քամալոլմոլքի դպրոցի նկարիչների ստեղծագործություններում՝ հընթացս ներկայացնելով Քամալոլմոլքի դպրոցի երկրորդ սերնդի աշակերտների կազմավորման պատմությունը, և Սաղախանեի դպրոցի նկարիչների գործերում: Ուսումնասիրության արդյունքում ատենախոսը պարզել է, որ ռեալիստ նկարիչները կնոջ կերպարը նախընտրում են պատկերել առօրյա կենցաղային պայմաններում ու միջավայրում՝ տանը, ընտանեկան օջախում, հասարակական վայրերում՝ շեշտելով նրա ավանդական տեղն ու դերը: Իսկ Սաղախանեի նկարիչների աշխատանքներում կինը, որպես կանոն, հանդես է գալիս իբրև սիրուհի, խնջույքների զարդ ու հաճույքի աղբյուր: Նույն գլխում ատենախոսն ուսումնասիրել է նաև Իսլամական հեղափոխությանը և Իրան-իրաքյան պատերազմին նվիրված գործերի տարբեր ասպեկտները, այդ պատմական իրադարձություններում կանանց ստանձնած դերը և նրանց ինքնության ցուցադրումը, ներկայացրել այդ

ժամանակաշրջանների մի շարք արվեստագետների ու նրանց գեղանկարները:

Երկրորդ գլուխը՝ «Կնոջ կերպարն Իրանի մոդեռն նկարչության մեջ», նվիրված է կնոջ կերպարին Իրանի ժամանակակից գեղանկարչության առաջատար վարպետների ստեղծագործություններում: Մ. Սեփասին ուսումնասիրել է կնոջ թեման մոդեռնիստական և այսպես կոչված «Թեյարանային» նկարչության արվեստագետների ստեղծագործություններում: Բացահայտվել է, որ նորարար նկարիչները կիրառում են նորագույն տեխնիկաներ ու գեղարվեստական ոճեր՝ փորձելով կնոջ կերպարը ներկայացնել կրոնական խավերի և մոլի հավատացյալների տեսանկյունից, և նախընտրում են ստեղծել կաղապարներն ու կարծրատիպերը, ընդունված նորմերը շրջանցող, դրանք մերժող ու ժխտող կտավներ, ինչպիսին է, օրինակ՝ Ջավադ Համիդիի «Խելացնորություն» (1952) կտավը: Ատենախոսը պարզաբանել է, որ այդ նկարիչների աշխատանքներից շատերը շեշտում են կանանց սեռական, զգայական գեղեցկությունը՝ խեղաթյուրված ձևերով և արտահայտչական նոր միջոցների ու հնարների կիրառմամբ: Իսկ «Թեյարանային» նկարիչները, Սաղախանեի նկարիչների օրինակով՝ գերադասում են պատկերել գեղեցիկ, բարետես, գայթակղիչ կանանց՝ զվարճանքների և խնջույքների կենսախինդ պահերին:

Երրորդ գլխում՝ «Կնոջ կերպարն Իրանի նորագույն շրջանի մանրանկարիչների ստեղծագործություններում», ատենախոսն անդրադառնում է Իրանի ժամանակակից մանրանկարչության մեջ կնոջ կերպարին՝ շեշտը դնելով ժամանակակից մանրանկարչության երկրորդ սերնդի նկարիչների գործերի վրա:

Չորրորդ գլխում՝ «Կնոջ կերպարն Իսլամական հեղափոխության նկարիչների ստեղծագործություններում», Մ. Սեփասին անդրադարձ է անում կնոջ կերպարի արտահայտմանն այն նկարիչների գործերում, ովքեր ստեղծագործել են Իսլամական հեղափոխության և դրան հաջորդած ժամանակաշրջանում, որն իր առանձնահատկություններով և հասարակության մեջ իր զարգացումներով խորը ազդեցություն է թողել կնոջ դերին ու դիրքին վերաբերող հայացքների վրա:

Նկարիչների պարտականություններից մեկն առկա գաղափարները, արժեքները և իրողությունները ներկայացնելն է: Նրանց գործերում կարող են ներկայացվել հասարակության տարբեր խմբեր: Թեև կանայք հասարակության տեսանկյունից հանրային ասպարեզ չեն գալիս, այնուամենայնիվ, լավագույնս արտացոլվել են արվեստագետների կտավներում: Նրանց գործունեությունը, որը չի երևում հասարակության մեջ, արտահայտվել է վերը նշված կտավներում: Նկարիչներն Իրանի քաղաքակրթության ամենացայտուն դրսևորումները պատկերել են կնոջ էության մեջ: Իրականում նրանք կնոջ գոյության իրողությունը փնտրում են իրենց սրտերում և պատկերում սեփական ստեղծագործություններում:

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ արվեստի գործերում կինը ներկայացվում է որպես իդեալական կերպար՝ նկարագրական, պատկերային և կարծրատիպային նշանների համակարգում, և պատկերվում է երևակայական տարածության մեջ: Նախահեղափոխական շրջանի նկարիչների գործերում կնոջ կերպարի անդրադարձը եղել է իմաստաբանական, այլաբանական և առասպելական: Այդ նկարիչների նպատակը ոչ միայն կանացիության, այլև կանացի հատկանիշների և կին լինելու

ենթադրյալ ու սուբյեկտիվ իմաստների, օրինակ՝ գեղեցկության ու քնքշության պատկերումն է: Սակայն հետհեղափոխական գեղանկարչական ստեղծագործություններում կնոջ կերպարի վերարտադրությունը հիմնված է կանանց հատկանիշների և կյանքի իրական պայմանների՝ ոչ կարծրատիպային ու մեկնաբանական հայացքների, կանանց երկրային կյանքի դժվարությունների արտահայտման և արվեստում նորագույն տեխնիկաների, գեղարվեստական ոճերի և արտահայտչական հնարքների կիրառման վրա:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ասպիրանտ **Զահրա Մալեկիի** «Պարսկական դասական պոեզիայի արձագանքներն իրանական ժամանակակից կերպարվեստում» (ԺԷ.00.03 – «Կերպարվեստ, դեկորատիվ և կիրառական արվեստ, դիզայն») թեմայով թեկնածուական ատենախոսության մեջ (գիտական ղեկավար՝ Արարատ Աղասյան)[3]՝ առաջին անգամ համակողմանիորեն ուսումնասիրվել է Նիզամիի, Օմար Խայամի, Ռումիի և Հաֆեզի պոեզիայի ազդեցությունն Իրանի ժամանակակից կերպարվեստի երեք ներկայացուցիչների՝ Այդին Աղդաշլուի, Ֆարահ Օսուլիի և Շահրիար Ահմադիի ստեղծագործության վրա, բացահայտվել են Օմար Խայամի քառյակների՝ Այդին Աղդաշլուի ստեղծագործություններում մարմնավորման առանձնահատկությունները՝ կապված մարդու կործանման ու վերացման հետ, որը վրա է հասնում մեկ ակնթարթում և պատկերվում է կոտրվելու, փշրվելու և քայքայման պահով: Բացահայտվել է նաև, որ ներշնչվելով Խայամից՝ Աղդաշլուն

[3] Հրապարակային պաշտպանությունը տեղի է ունեցել ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի Արվեստագիտության 016 մասնագիտական խորհրդի 2023 թ. հուլիսի 13-ի նիստում:

իր գեղանկարչության երեք հիմնական տարրեր է դարձրել «Գինին», «Ժամանակը» և «Մարդուն»: Բացահայտվել է, որ Հաֆեզի բանաստեղծությունների միջոցով Աղդաշլուն իրանական դիմանկարում և մանրանկարչության մեջ ներմուծել է սյուրռեալիստական ոճը և ստեղծել նոր ոճ՝ «Ճմռթված մանրանկարչություն»: Ուսումնասիրվել են Հաֆեզի գազելների հիման վրա ստեղծված Ֆարահ Օսուլիի նկարները: Քննության է առնվել Ֆարահ Օսուլիի «Վիրավոր շնորհը» նկարաշարը: Հետազոտվել են Շահրիար Ահմադիի՝ Ռումիի բանաստեղծությունների, մասնավորապես գազելների հիման վրա ստեղծված գեղանկարները: Գիտական շրջանառության մեջ են դրվել արխիվային նյութեր, նորահայտ փաստեր, հոդվածներ ժամանակի մամուլից:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և վերատպություններից կազմված հավելվածից:

Առաջին՝ «Պարսկական նկարչության կապերն ազգային դասական տաղերգության հետ (պատմական համառոտ ակնարկ)» գլխի երեք ենթագլուխներում քննության են առնվել պարսկական նկարչության հին և նոր շրջանները, Իրանի նկարչությունը 20-րդ դարում (մինչև Իսլամական հեղափոխությունը և հեղափոխությունից հետո), ինչպես նաև Իրանի արդի նկարչության մեջ ֆիգուրատիվ ոճի սկզբնավորողներից մեկի՝ Հաննիբալ Ալխասի ստեղծագործության անբաժան մասը կազմող և պարսից դասական պոեզիայի՝ Ֆիրդուսու «Շահնամեի», Հաֆեզի, Սաադիի, Ռումիի ստեղծագործությունների թեմաներով ստեղծված գործերը: Երկրորդ՝ «Այդին Աղդաշլու», գլխի համապատասխան ենթագլուխներում ներկայացվել է նկարչի

կյանքն ու գործունեությունը, քննության են առնվել նրա գեղանկարների թեմատիկան և տեխնիկան, բացահայտվել են Օմար Խայամի, Հաֆեզի և Նիզամիի պոեզիայի մարմնավորումը Աղդաշլուի արվեստում, ինչպես նաև արևմտյան արվեստագետների ազդեցությունը նկարչի ստեղծագործություններում: Երրորդ՝ «Ֆարահ Օսուլի», գլխի երեք ենթագլուխներում համառոտ ներկայացվել է Ֆարահ Օսուլիի կենսագրությունը, հետազոտվել են Հաֆեզի գրական աշխարհի արձագանքները նկարչուհու ստեղծագործության մեջ և վերլուծության է ենթարկվել «Վիրավոր շնորհը» նկարաշարը: Չորրորդ՝ «Շահրիար Ահմադի», գլխի երեք ենթագլուխներում համապատասխանաբար տրվել է նկարչի համառոտ կենսագրությունը, քննության է առնվել 13-րդ դարի բանաստեղծ Ռումիի բանաստեղծական աշխարհի՝ մասնավորապես «Դիվանե Շամսի» գազելներից թիվ 3093 գազելի, արտացոլումը Շահրիար Ահմադիի արվեստում, բացահայտվել է Ռումիի ու Շահրիար Ահմադիի կապը, ինչպես նաև վերլուծության են ենթարկվել Նիզամիի, Խայամի և Հաֆեզի բանաստեղծությունների հիման վրա նկարչի ստեղծած աշխատանքները:

Ճարտարապետություն

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ճարտարապետության բաժնի ասպիրանտ **Ֆարիբորզ Յադոլլահիի** «Սեմնան քաղաքի պատմական կորիզի պահպանության և օպտիմիզացման ճարտարապետագեղարվեստական հիմնախնդիրները» (ԺԸ.00.01 – «Ճարտարապետություն») թեմայով թեկնածուական ատենախոսության մեջ (գիտական

ղեկավար՝ Դավիթ Քերթմենջյան)[4]՝ առաջին անգամ բարձրացվեցին Սեմնան քաղաքի պատմական կորիզի հուշարձանապահպանության բարելավման միջոցառումները, որոնք դիտարկվում են հուշարձանապահպանության նոր տեսություններով և պարզաբանվում «ցողունային» անունը կրող քաղաքի զարգացման տեսության մեթոդականությամբ: Քննարկելով քաղաքի զարգացման ընթացքը՝ նորովի մոտեցմամբ պարզաբանվում են պատմական հյուսվածքի մաշվածության պատճառները և քաղաքային նոր հյուսվածքների ստեղծման անհրաժեշտությունը: Առաջադրվող մոդելում նորովի մոտեցմամբ քննարկվում են մաշված հյուսվածքների նկատմամբ վարվելաձևի սահմանման կարգը և դրանց բարեփոխման և ամրապնդման հիմնական տարբերակները:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ճարտարապետության բաժնի ասպիրանտներ **Ղազալ Ֆատեհը** և **Մաջիդ Մոզունին** իրենց թեկնածուական ատենախոսությունները հաջողությամբ պաշտպանեցին Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանում գործող Ճարտարապետության և շինարարության 030 մասնագիտական խորհրդում և ստացան ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճան:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ճարտարապետության բաժնի ասպիրանտ **Ղազալ Ֆատեհի** «Զբոսաշրջության սպասարկող կենտրոնների

---

[4] Ատենախոսության հրապարակային պաշտպանությունը տեղի ունեցավ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական աստիճանաշնորհման 016 մասնագիտական խորհրդի 2011 թ. դեկտեմբերի 22-ի նիստում, և գիտական աստիճանաշնորհման մասնագիտական խորհուրդը նրան շնորհեց արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան:

ճարտարապետական գործոնների զարգացումն Իրանի Սեմնան տարածաշրջանում» թեմայով ատենախոսությունը[5] (գիտական ղեկավար՝ Դավիթ Քերթմենջյան)[6]՝ վերաբերում է զբոսաշրջության ճարտարապետական կողմին: Աշխատության մեջ մասնագիտորեն դիտարկված են զբոսաշրջության մեջ ճարտարապետության երկու կարևոր ասպեկտները.

1. ճարտարապետական հուշարձանների դերն ուսումնասիրվող տարածքում որպես միջավայրի գործող բաղկացուցիչ տարր,

2. ժամանակակից ճարտարապետական ինֆրակառուցվածքի ստեղծումը որպես զբոսաշրջության ճարտարապետական զարգացման կարևոր գործոն:

Ուսումնասիրությունը ներկայացնում է տուրիստական գոտիների (կենտրոնների և հիմնական երթուղիների) պլանավորման և նախագծման գործնական մոտեցումը՝ որպես հետազոտության առաջին փուլ, իսկ երկրորդը՝ տուրիստական ծառայություններ մատուցող կենտրոնների գիտական վերլուծական մոտեցմամբ պլանավորումն ու ճարտարապետական նախագծումը՝ նշված տարածաշրջանում տուրիզմը զարգացնելու նպատակով: Բացի այդ, աշխատանքում ներկայացված են գործոնները, որոնք պայմանավորում են Իրանի Սեմնան շրջանում

---

[5] Ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար այս ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ճարտարապետության բաժնի 2013 թ. փետրվարի 13-ի ընդլայնված նիստում:

[6] Ատենախոսության թեմայով ատենախոսը Երևանում, Իրանում և Լեհաստանում հրատարակել է 14 գիտական հոդվածներ՝ անգլերեն և պարսկերեն լեզուներով, որոնք լիարժեք բացահայտում են ատենախոսության բովանդակությունը:

զբոսաշրջության զարգացումը տարածական տեսանկյունից (շրջակա միջավայրի և ճարտարապետական):

Առաջին գլխում ներկայացվում են Սեմնան շրջանը՝ որպես գործնական ուսումնասիրությունների անցկացման համապատասխան մոդել, Իրանում և Սեմնան շրջանում տուրիզմի արդյունաբերության վիճակը և ուսումնասիրվող ոլորտում առկա արդյունավետ նախագծերը: Երկրորդ գլխում բերված է զբոսաշրջության գրավիչ կողմերի ուսումնասիրության մոդելը, որտեղ տուրիզմի բոլոր ռեսուրսները բաժանվել են ըստ դասերի ու կատեգորիաների, ներկայացված են դրանց առկա վիճակը (status quo) և տուրիզմի արդյունաբերության զարգացումը պայմանավորող գործոնները: Ուսումնասիրությունների արդյունքներն ընդգրկում են տարածաշրջանում գոյություն ունեցող այն առանձնահատկությունները, որոնք անհրաժեշտ են Սեմնան շրջանում տուրիստական այդ սերվիս-կենտրոնների ճարտարապետական նախագծմանն ուղղված որոշակի դիրեկտիվների մշակման համար: Երրորդ գլուխը նվիրված է փորձարարական մոդելի SWOT վերլուծությանն ու գնահատմանը՝ առաջին և երկրորդ գլխում ներկայացված տեղեկատվության և ուսումնասիրությունների արդյունքում ստացած տվյալների ինտեգրման հիման վրա: Տուրիստական օբյեկտների նախագծման համար ընտրվել են Սեմնան նահանգի սերվիս-կենտրոնների հինգ տիպարային նախագծեր: Բոլոր ճարտարապետական սկզբունքները բաժանված են երկու հիմնական խմբի՝ զբոսաշրջության քաղաքային և ռեգիոնալ հիմնական երթուղիների վրա ազդող հանգամանքներ, որոնք կարևոր են ճարտարապետական նախագծման համար, և հանգամանքներ, որոնք ազդեցություն ունեն սերվիս-կենտրոնների տեղի և ճարտարապետական դիզայնի

որոշման, ձևավորման ու մշակման համար:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ասպիրանտ **Մաջիդ Մոզունիի** «Իրանի մզկիթների ճարտարապետական պաթոլոգիան արդի ժամանակաշրջանում (1920-2013թթ.)»[7] թեմայով թեկնածուական ատենախոսության[8] (գիտական ղեկավար՝ Դավիթ Քերթմենջյան) գիտական նորույթն Իրանի արդի մզկիթաշինության քննական ներկայացումն է, մզկիթների նախագծային գործընթացի պաթոլոգիական վերլուծությունը և համապատասխան ուղղման հնարավորությունների առաջադրումը: Ատենախոսության նպատակը տիրող դրության բարելավումն է, ինչի կապակցությամբ սահմանվել են գիտական հետևյալ խնդիրները՝ ա/ մզկիթի նախագծման ընդունված նորմերի ամրագրումը, բ/ Իրանի արդի մզկիթներում ճարտարապետական նորմերից շեղումների բացահայտումն ու նրանց վերնայման միջոցների առաջադրումը և գ/ նոր նորմերի ներմուծումը:

Ատենախոսության առաջին՝ «Իսլամական մզկիթների պատմատեսական հիմնարար հասկացությունները» գլխում դիտարկվել են իսլամական մզկիթաշինության տիպաբանությունը, հորինվածքը, ձևագոյացումը կամ մզկիթի բովանդակ տարածությունների տեսությունը, շինարվեստն ու մանրամասերի խորհրդանիշը: Երկրորդ՝

---

[7] Ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար այս ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի 2014 թ. մայիսի 22-ի N 9 ընդլայնված նիստում:

[8] Ատենախոսության թեմայով ատենախոսը հրատարակել է 7 գիտական հոդվածներ, որոնք լիարժեք բացահայտում են ատենախոսության բովանդակությունը:

«Մզկիթաշինության զարգացումը Իրանի Իսլամական Հանրապետությունում հնուց մինչև մեր օրերը» գլխում, ուսումնասիրվել է իրանական մզկիթաշինության հին և նոր ժառանգությունը՝ կազմավորման և զարգացման ժամանակաշրջանները, ճանաչողական հուշարձանները և ոճական առանձնահատկությունները: Երրորդ՝ «Իրանի ժամանակակից մզկիթների ճարտարապետության պաթոլոգիան և վիճակագրական ուսումնասիրությունը» գլխում, ներկայացվել է իրանական արդի մզկիթաշինության քննական պաթոլոգիան կամ նախագծամեթոդական գործընթացը:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ասպիրանտ **Արման Լուկասի** «Նոր Ջուղայի ապարանքների ճարտարապետությունը (XVII - XIX դարեր)» (ԺԸ.00.01 - «Ճարտարապետություն և ճարտարապետական դիզայն») թեմայով թեկնածուական ատենախոսության[9] մեջ (գիտական ղեկավար՝ Դավիթ Քերթմենջյան)՝ առաջին անգամ համակողմանիորեն ուսումնասիրվել է Նոր Ջուղայի ապարանքների ճարտարապետությունը[10]: Հայկական և պարսկական տեսակետների միահյուսմամբ՝ նորովի են մեկնաբանվել հայկական «խոջայական» և այլ ապարանքների ճարտարապետական միջոցառումները, բնութագրվել են ջուղայական ապարանքների ոճական

---

[9] Արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցով թեկնածուական ատենախոսության հրապարակային պաշտպանությունը կայացել է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական աստիճանաշնորհման 016 մասնագիտական խորհրդի 2019 թ. մարտի 14-ի նիստում:

[10] Ատենախոսության թեմայով ատենախոսի գիտական ութ հոդվածներն ու վեց զեկուցումները լիարժեք բացահայտում են ատենախոսության բովանդակությունը:

հատկանիշները: Հընթացս՝ մեթոդական վերլուծության է ենթարկվել տիպաբանական ձևագոյացումը, գնահատվել ու համակարգվել են տարածական սխեմաները, իրականացվել է հորինվածքային «կառուցվածքային» վերլուծությունն ըստ ճարտարապետական ծավալատարածական հորինվածքի, տեսական դրույթների և այլն:

Հետազոտության մեջ բնութագրվել է Նոր Ջուղայի մշակութային ժառանգությունը և դրանում ապարանքների ճարտարապետության տեղը, ուսումնասիրվել են ավերված ապարանքները, փաստագրավերլուծվել են ներկայումս կանգուն ապարանքները, բացահայտվել են հայ-պարսկական և միջազգային ճարտարապետական ազդեցությունները Նոր Ջուղայի ապարանքների ճարտարապետության մեջ, իրականացվել է Նոր Ջուղայի ապարանքների ճարտարապետական բնութագրումը:

Ատենախոսությունը բաղկացած է առաջաբանից, երեք գլուխներից (գլուխ առաջին՝ «Նոր Ջուղայի լանդշաֆտն ու քաղաքաշինական բնութագիրը», գլուխ երկրորդ՝ «Նոր Ջուղայի ապարանքների ճարտարապետական փաստագրումը» և գլուխ երրորդ՝ «Նոր Ջուղայի ապարանքների ճարտարապետության հորինվածքը հայկական և իրանական զուգահեռներով»), եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից, որը ներկայացված է պատկերագրքի և գծագրերի տեսքով:

Ատենախոսը գտնում է, որ Նոր Ջուղայի ապարանքների ձևերի պարզությունը ժողովրդական շինավանդույթների միջոցով միասնական կերպարի հասնելու ձգտման արդյունք է: Ընդ որում՝ դեկորատիվ այդ տարրերն օգտագործվում էին գիտակցաբար ու մտածված՝ ռացիոնալ: Բարդ դեկորատիվ տարրերը կիրառվում էին

ճարտարապետական ուտիլիտար մասերում, որը գրավում էր դիտողի ուշադրությունը, ինչը, ի դեպ, հայկական պատմական ճարտարապետության սկզբնաղբյուրներից է:

Թեև ընդունված է Նոր Ջուղայի ապարանքների ճարտարապետական ժառանգությունը բնութագրել որպես հայկական և սեֆյան պարսկական մշակույթի երկխոսություն, սակայն ատենախոսը պնդում է, որ Նոր Ջուղայի 18-րդ և 19-րդ դարերի ճարտարապետական զարգացումներում ներմուծվել են իրանական Աֆշարի, Զանդի և ղաջարական գեղարվեստական նախասիրությունները ևս, ինչը հատկապես արտահայտվել է ապարանքների ինտերիերային արվեստում՝ ի դեմս «Այնի-բորի» հայելավոր զարդամշակումների, «Օրսի» լուսամուտների, «Մուգարնաս» և «Քաթարա» զարդարվեստի տեսակների և այլն: Ատենախոսի կարծիքով՝ այս դարերում Նոր Ջուղայի արվեստներում կատարվեց անցում դեպի արևմտյան մշակույթը, հանգամանք, որ հատուկ լինելով հայկական գաղթավայրերի նախասիրություններին՝ Նոր Ջուղայում հատկապես ներմուծվեց ուսումնասիրված ապարանքներից՝ Զովալյանի, Սուքիասի, Պետրոս Ղուլիճանի առանձնատների օրինակներով:

Իր ուսումնասիրության արդյունքում ատենախոսը եզրակացնում է, որ Նոր Ջուղայի ապարանքները միջնադարյան ռացիոնալ լուծումներով ջուղայեցի ժողովրդի արհեստի և արվեստի միահյուսման անկրկնելի օրինակներ են, ինչն այսօր կարելի է բնութագրել որպես եզակի նմուշ միջազգային վերնակուլյար (տարածքային) ճարտարապետության մեջ: Այն գաղթավայրերի ճարտարապետության միջազգային նոր դրսևորում է և կարող է արժևորվել որպես ներկայիս ռեգիոնալ

միջավայրակայուն ճարտարապետության ստեղծման ուղիներից մեկը:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ասպիրանտ **Սառա Մալեք Մոհամմադիի** «Թեհրանի թատրոնների ճարտարապետությունը՝ տարածաշրջանի հայկական թատրոնների համեմատությամբ» (ԺԸ.00.01 – «Ճարտարապետություն և ճարտարապետական դիզայն») թեմայով թեկնածուական ատենախոսության մեջ (գիտական ղեկավար՝ Դավիթ Քերթմենջյան)[11]՝ առաջին անգամ հատակագծային-տարածական առումով դասակարգվել են Թեհրանի թատերական շենքերը, քննության է առնվել դրանց էքստերիերի և ինտերիերի փոխադարձ կապը, ուսումնասիրվել են դրանց ոճական առանձնահատկությունները, ինչպես նաև, տարածաշրջանի գաղթավայրերի թատերական շենքերի օրինակներով բացահայտվել է հայկական համայնքի բերած նորույթը[12]: Ատենախոսը ցուցակագրել է Թեհրանում գտնվող թատերական շենքերը, միջազգային զուգահեռների համեմատական ուսումնասիրությամբ ներկայացրել դրանց տիպաբանական զարգացումը, վերլուծել դրանց ճարտարապետական հորինվածքը և բացահայտել ոճական առանձնահատկությունները, լուսաբանել տարածքային

---

[11] Արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցով ատենախոսության հրապարակային պաշտպանությունը տեղի է ունեցել ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական աստիճանաշնորհման 016 մասնագիտական խորհրդի 2021 թ. հուլիսի 8-ի նիստում (հեռավար ձևաչափով):

[12] Ատենախոսության թեմայով Հայաստանում, Ռուսաստանի Դաշնությունում և Իրանի Իսլամական Հանրապետությունում հայերեն, ռուսերեն և պարսկերեն լեզուներով տպագրված ատենախոսի գիտական ինը հոդվածները, ինչպես նաև չորս զեկուցումները լիարժեք բացահայտում են ատենախոսության բովանդակությունը:

փոխազդեցությունների դերը՝ ի դեմս հայկական համայնքի գործունեությանը Թեհրանում և մի շարք հայկական բնակավայրերում (այդ թվում՝ Թավրիզում, Ջուղայում, Երևանում, Բաքվում, Կ.Պոլիսում, Թբիլիսիում):

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից (գլուխ առաջին՝ «Թատերական շենքերի պատմական և ճարտարապետական կառուցվածքի զարգացման մասին ակնարկ», գլուխ երկրորդ՝ «Հայերի տարածաշրջանային ավանդը թատերական շինությունների ու թատերարվեստի զարգացման մեջ Թեհրանում, Թբիլիսիում, Բաքվում, Կ.Պոլսում, Երևանում» և գլուխ երրորդ՝ «Թեհրանի թատերական շենքերի ճարտարապետությունը»), եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից, նկարացանկից և հավելվածից, որտեղ ներկայացված են աղյուսակներ և 264 լուսանկար:

Ատենախոսը գտնում է, որ Թեհրանի թատրոնների ճարտարապետությունը, ընդհանուր առմամբ մոնումենտալ լինելով հանդերձ, ունի հարուստ ինտերիերային մասեր: Իրանական թատրոնի շենքերը միջազգային զուգահեռներով դիտարկելիս՝ ատենախոսը նկատում է, որ համաշխարհային օրինակներն ունեն որոշակի ծավալատարածական կերպարային միաշնչություն, մինչդեռ իրանական օրինակները միասնական չեն ներքին և արտաքին լուծումներում: Ճարտարապետական միաշունչ լուծումներով բացառություն է Թեհրանի Քաղաքային թատրոնի համալիրը: Թատերական մյուս շենքերի ինտերիերում և էքստերիերում նկատվող ճարտարապետական երկվությունն արտաքին լուծումներում տեղական միջավայրային համասեռության ստեղծման արդյունք է, որին մեծ

նշանակություն է տրվում իրանական ճարտարապետության մեջ:

Թեհրանի թատրոններն ատենախոսը բնութագրում է հետևյալ առանձնահատկություններով.

Ա. Պարբերացման առումով՝ Թեհրանում գոյություն ունեցող թատրոններն անցել են զարգացման երկու հիմնական փուլ. ա) 19-րդ դարից մինչև Իրանի իսլամական հեղափոխությունը, բ) Իսլամական հեղափոխության դարաշրջանը:

Բ. Քաղաքաշինական առումով՝ Թեհրանի գլխավոր հատակագծում բացի Բահման և Նիավարան թատրոններից, թատրոնների բոլոր շենքերը տեղակայված են քաղաքի կենտրոնում և գտնվում են միմյանցից շատ քիչ հեռավորության վրա:

Գ. Տիպաբանական առումով՝ Թեհրանում գործող թատրոնները կառուցվել են հիմնականում երկու տեսակի բեմական տարբերակներով՝ ա. պրոսկենիում կամ խորքային բեմով, բ. Իրանի ժառանգորդական սև արկղի՝ բաց բեմի սխեմայով:

Դ. Հորինվածքային առումով՝ Թեհրանի Քաղաքային թատրոնի համալիրն ու Վահդատ թատրոնի դահլիճը Փահլավի II-ի իշխանության օրոք կառուցված այն երկու բացառություններն են, որոնց ինտերիերն իրականացված է մոդեռնիստական լուծումներով:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի Արվեստագիտության 016 մասնագիտական խորհուրդը

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի Արվեստագիտության 016 մասնագիտական խորհրդում իրենց թեկնածուական ատենախոսություններն են պաշտպանել և արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան ստացել ինչպես Արվեստի ինստիտուտի, այնպես

էլ Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի և Երևանի պետական համալսարանի իրանցի ասպիրանտները:

Ստորև ներկայացնում ենք համապատասխան տեղեկատվություն, որը կազմվել և գիտական շրջանառության մեջ է դրվում առաջին անգամ:

ՑՈՒՑԱԿ
ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի
Արվեստագիտության 016 մասնագիտական խորհրդում պաշտպանած և արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան ստացած իրանցի ասպիրանտների (2012-2023թթ.)

Հ/հ	**Ազգանուն, անուն, թվանիշը**	**Կազմակերպությունը, որտեղ հաստատվել է թեման, գիտական ղեկավարը**	**Ատենախոսության թեման**	**Պաշտպանության ամսաթիվը**
1.	**Համիդ Ասքարի Ռաբորի** ԺԷ.00.02	Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա, արվ. դ-ր, պրոֆ. **Սվետլանա Սարգսյան**	Ժողովրդական երգերի խմբերգային մշակումները 20-րդ դարի երաժշտության մեջ	31 մայիսի, 2012 թ.
2.	**Ֆարզադ Շիրնասաբզադեհ** ԺԷ.00.03	ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ, պ.գ.թ. **Ֆելիքս Տեր Մարտիրոսով**	Միր Մալասի ժայռապատկերները	23 հունվարի, 2014 թ.
3.	**Ֆաթեմեհ Դարջվար** ԺԷ.00.03	Երևանի գեղարվեստի պետական	Ղաջարյան շրջանի թեյարանային պատմողական	22 հունվարի, 2015 թ.

		ակադեմիա, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ **Վիգեն Ղազարյան**	որմնանկարչություն	
4.	**Համիդ Խոդադադի Ալեմի** ժէ.00.03	ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ (ԵՊՀ ասպիրանտ), արվ. դ-ր, պրոֆ. **Լևոն Չուգասզյան**	Իրանի Իսլամական հեղափոխության աֆիշի արվեստը	29 հունվարի, 2015 թ.
5.	**Համիդռեզա Շերբաֆյան** ժէ.00.03	ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ, ԵՊՀ ասպիրանտ, արվ. դ-ր, պրոֆ. **Լևոն Չուգասզյան**	Սպահանի գեղանկարչության դպրոցը և նրանում Ռեզա Աբբասիի տեղը	26 փետրվարի, 2015 թ.
6.	**Մանդանա Սեփասի** ժէ.00.03	ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ **Արարատ Աղասյան**	Կնոջ կերպարն Իրանի ժամանակակից նկարիչների ստեղծագործություններում	26 մարտի, 2015 թ.
7.	**Վահդատ Յարմոհամմադի** ժէ.00.03	Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա, ճարտ. դ-ր, պրոֆ. **Դավիթ Քերթմենջյան**	Բիշապուր քաղաքի գեղարվեստական ժառանգության կրոնական սիմվոլիկան՝ Սասանյան զուգահեռներով	25 հունիսի, 2015 թ.

8.	**Ալի Ասղար Մեշքինի** ԺԷ.00.03	ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ (ԵՊՀ ասպիրանտ), արվ. դ-ր, պրոֆ. **Լևոն Չուգասզյան**	Հերաթի գեղանկարչության դպրոցը և վարպետ Բեհզադի դերը դրա զարգացման գործում	29 հոկտեմբերի, 2015 թ.
9.	**Մահդի Ղասեմի Ալիաքբարզադե** ԺԷ.00.03	ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ (ԵՊՀ ասպիրանտ), արվ. դ-ր, պրոֆ. **Լևոն Չուգասզյան**	Հայ արվեստագետների ներդրումն Իրանի նոր և նորագույն շրջանների նկարչության մեջ	12 մայիսի, 2016 թ.
10.	**Մաջիդ Ահմադ Յազդանփանահ** ԺԷ.00.03	ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ (ԵՊՀ ասպիրանտ), արվ. դ-ր, պրոֆ. **Լևոն Չուգասզյան**	Քերմանշահի ժայռաքանդակները (մ.թ.ա. 3-րդ հազարամյակից մինչև մ.թ. 7-րդ դար)	9 հունիսի, 2016 թ.
11.	**Շահրբանու Խազան** ԺԷ.00.03	Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ **Վիգեն Ղազարյան**	Զարդանախշը Սեֆյան թագավորության շրջանում	19 հունվարի, 2017 թ.
12.	**Արման Լուկաս** ԺԸ.00.01	ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ,	Նոր Ջուղայի ապարանքների ճարտարապետու-	14 մարտի, 2019 թ.

		ճարտ. դ-ր, պրոֆ. **Դավիթ Քերթմենջյան**	թյունը (XVII – XIX դարեր)	
13.	**Սառա Մալեք Մոհամմադի** ԺԸ.00.01	ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ, ճարտ. դ-ր, պրոֆ. **Դավիթ Քերթմենջյան**	Թեհրանի թատրոնների ճարտարապետությունը՝ տարածաշրջանի հայկական թատրոնների համեմատությամբ	8 հուլիսի, 2021 թ.
14.	**Զահրա Մալեկի Սամադ** ԺԷ.00.03	ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ **Արարատ Աղասյան**	Պարսկական դասական պոեզիայի արձագանքներն իրանական ժամանակակից կերպարվեստում	13 հուլիսի, 2023 թ.

Եզրակացություն

1. ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ասպիրանտ՝ Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացիների գիտական հետաքրքրությունների առանցքում գտնվել են պարսկական (այդ թվում՝ իրանահայ) կերպարվեստի և ճարտարապետության ուսումնասիրության հարցերը: Կերպարվեստագիտության ասպարեզում հետազոտվել է ինչպես հնագույն շրջանի արվեստը, այդ թվում՝ Միր Մալասի ժայռապատկերները, այնպես էլ ժամանակակից նկարչությունը, մասնավորապես՝ կնոջ կերպարն Իրանի ժամանակակից նկարիչների ստեղծագործություններում և պարսկական դասական պոեզիայի արձագանքներն իրանական ժամանակակից կերպարվեստում: Ճարտարապետագիտության ասպարեզում հետազոտվել են, մի կողմից՝ Իրանի մզկիթների ճարտարապետական

պաթոլոգիան արդի ժամանակաշրջանում (1920-2013թթ.) և Թեհրանի թատրոնների ճարտարապետությունը՝ տարածաշրջանի հայկական թատրոնների համեմատությամբ, մյուս կողմից՝ Նոր Ջուղայի ապարանքների ճարտարապետությունը (XVII – XIX դարեր) և այլն:

2. ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտն արվեստագիտության ասպարեզում մրցունակ կադրեր է պատրաստել Իրանի Իսլամական Հանրապետության համար, իսկ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի Արվեստագիտության 016 մասնագիտական խորհրդում իրենց թեկնածուական ատենախոսությունները հաջողությամբ պաշտպանած և արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան ստացած իրանցիներն այսօր իրենց գիտական և գիտամանկավարժական գործունեությունն են ծավալում Իրանում:

ANNA ASATRYAN
Doctor of Sciences (Arts), Professor,
RA Honored Worker of Arts,
director of NAS RA Institute of Arts
E-mail:instart@sci.am, annaasatryan2013@gmail.com

NAS RA INSTITUTE OF ARTS AND THE STUDY OF PERSIAN ART

NAS RA Institute of Arts prepares scholars for our neighboring friendly country - the Islamic Republic of Iran. From the year 2008, citizens of the Islamic Republic of Iran do their postgraduate research work at the Institute. Many of them, having completed and defended in due term their PhD theses, are awarded a PhD degree in Arts and/or Architecture. Naturally, their research is mainly focused on the issues of Persian art.

NAS RA Institute of Arts Specialized Academic Council in Arts 016, the only one in Armenia, awards academic degrees in all the fields

of Art Criticism. At the Specialized Council 016, postgraduate students of not only NAS RA Institute of Arts, but also of Yerevan State Academy of Arts, Yerevan State University and Komitas Yerevan State Conservatory - citizens of the Islamic Republic of Iran, defended their PhD theses.

In the article, the contribution of NAS RA Institute of Arts to the study of Persian art is elucidated for the first time. The list and relevant data of the Iranian postgraduate students, who defended their theses at NAS RA Institute of Arts Specialized Academic Council in Arts 016 and received academic degrees of PhD in Arts, was compiled and introduced to academic circles for the first time.